



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտեր

Առարկան՝ Երաժշտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Չուլջյան Լաուրա

Ուսումնական հաստատություն՝ Երևանի հ.175 միջնակարգ դպրոց

Երևան 2023

Չեղարկության թեման`
«Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ»

Չարցեր`

1. Ընտանեկան հարաբերությունների խաթարումների պատճառները.
2. Կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների վրա, դրանց հետևանքները.
3. Ընտանիքի ճիշտ դիքորոշումը կոնֆլիկտները ճիշտ լուծելու հարցում.

Բովանդակություն

Ներածություն.....	4
Գլուխ 1	
1.1 Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ.....	6
1.2 Ընտանեկան փոխհարաբերությունների խաթարումների հիմնական պատճառները.....	7
Գլուխ 2	
2.1 Կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների վրա.....	8
2.2 Կոնֆլիկտների հետևանքները.....	11
Գլուխ 3	
Ընտանիքի ճիշտ դիրքորոշումը կոնֆլիկտները ճիշտ լուծելու հարցում.....	13
Եզրակացություն.....	14
Գրականության ցանկ.....	15

Ներածություն

Ընտանիքը հասարակություն բջիջն է, նրա կոլեկտիվներից մեկը, այն «լաբորատորիան» է, որտեղ ձևավորվում է անձը: Ընտանիքում երեխան ամեն օր լսում է ծնողների դատողություններն ու գնահատումները, դիտում է նրանց վերաբերմունքը միմյանց և ուրիշ մարդկանց նկատմամբ: Հետևաբար, ընտանիքում երեխան ներգրավվում է սոցիալական հարաբերություններում, որոնք ձևավորում են ապագա անհատին, նպաստում նրա աշխարհայացքի ձևավորմանը: Ըստ այդմ էլ դպրոցական կյանքում ծագող խնդիրների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերած սոցիալական դիրքորոշումները:

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, առաջացնում սթրես, լարվածություն: Եվ այստեղ առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենու են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ:

Թեմայի արդիականությունը

Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, ներընտանեկան հարաբերությունների մակարդակը, ընտանիքի կառուցվածքը, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեբանության վրա:

Կոնֆլիկտների կանխարգելման գործում կարևորվում է հատկապես ծնողների հոգեբանական գիտելիքների հարստացումը, նրանց կողմից երեխայի բազմակողմանի զարգացումն ապահովող դաստիարակությունը, ընտանեկան առողջ մթնոլորտը: Այդ իսկ պատճառով թե՛ տեսական, թե՛ գործնական առումներով արդիական է երեխայի ընտանիքի, ներընտանեկան հարաբերությունների, ծնողական վերաբերմունքի ուսումնասիրումը: Ստեղծված իրավիճակում կարևորվում և խիստ արդիական է դառնում ընտանեկան դաստիարակության սոցիալական և հոգեբանական ազդեցության շեշտադրումը:

Թեմայի նպատակը

1. Բնութագրել ընտանեկան հարաբերությունների խախտումներ (կոնֆլիկտներ) առաջացնող հիմնական պատճառները
2. Բացահայտել կոնֆլիկտների կանխարգելման գործընթացում ընտանեկան միջավայրի ազդեցությունը երեխաների վրա:

Թեմայի խնդիրները

1. Ցույց տալ ընտանեկան կոնֆլիկտների հետևանքները
2. Հետազոտել երեխաների սոցիալական կարգավիճակը կոնֆլիկտների առկայության դեպքում
3. Հիմնավորել երեխայի ներընտանեկան հարաբերությունների, ծնողի ղեկավարման ոճի, նրբանկատ մոտեցման և այլնի ազդեցության նշանակությունը կոնֆլիկտների հետ կապված երեխայի մոտ տագնապային իրավիճակների առաջացման ու կանխարգելման գործում:

Գլուխ 1

1.1 Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Ընտանիքը հասարակության բջիջն է, նրա կոլեկտիվներից մեկը, այն «լաբարատորիան» է որտեղ ձևավորվում է անձը: Ընտանիքի երջանկությունն ու նրա բարոյական մթնոլորտը մեծապես կախված է այն բանից, թե այնտեղ բոլոր անդամների միջև տիրում է արդյոք վստահությամբ, սիրով ու փոխըմբռնմամբ լի մթնոլորտ: Քանի որ ընտանիքում երեխան ամեն օր լսում է ծնողների դատողություններն ու գնահատումները, դիտում է նրանց վերաբերմունքն միմյանց և ուրիշ մարդկանց նկատմամբ, ուստի նա ներգրավվում է սոցիալական հարաբերություններում, որոնք ձևավորում են ապագա անհատին, նպաստում նրա աշխարհայացքի ձևավորմանը: Հետևաբար դպրոցական կյանքում ծագող խնդիրների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերած սոցիալական դիրքորոշումները:

Չկա ընտանիք, որտեղ ժամանակ առ ժամանակ չլինեն տարածայնություններ (կոնֆլիկտներ), որոնց կարելի է դիտարկել իբրև «նորբ ազդակ», որի միջոցով ստուգվում է ընտանիքում ի հայտ եկող խնդիրները համատեղ լուծելու կարողության ու ցանկության առկայությունը:

Ընտանիքը ամուր է այն ժամանակ, երբ զույգերի միջև ստեծված են բարիադրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, զիջող են, և ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է: Բարեհաջող ընտանիքներում շփումը աչքի է ընկնում շիտակությամբ, տարբեր թեմաների ոչ հիվանդագին քննարկմամբ, քննարկվող թեմաների մտերմիկությամբ, անկեղծությամբ, ամուսինների փոխադարձ վստահությամբ և փոխադարձ վստահության սպասումով, միմյանց արտահայտած կարծիքների թաքուն իմաստը զգալու կարողությամբ, ոչ թե «հաղթանակ տանելու», այլ փոխադարձորեն ընդունելի լուծում գտնելու կարողությամբ:

1.2 Ընտանեկան փոխհարաբերությունների խաթարումների հիմնական պատճառները:

Ընտանիքում փոխադարձ կապվածության խախտումները կարող են կախված լինել ամենից առաջ այնպիսի որոշակի թեմաների առկայության հետ, որոնք կոնֆլիկտային իրադրություն են առաջացնում: Յուրաքանչյուր ընտանիքում կարող են ծագել քննարկման ենթակա իրենց հիվանդագին հարցերը: Դրաք կարող են լինել ապագայի չիրականացված պլաններ, բնավորության, վարվելաձևի ինչ-որ առանձնահատկության, (ավելորդ համեստության, անմարդամոտության) և այլ: Կոնկրոտ թեմաները կարող են տարբեր լինել, բայց դրանցից յուրաքանչյուրի քննարկումը, երբ ամուսինների միջև խախտվել են փոխհարաբերությունները, կարծես բացառում է ամուսնու ապրումները ճիշտ հասկանալու և կոնֆլիկտից կոնստրուկտիվ ելք գտնելու հնարավորությունը:

Իսկ ո՞րոնք են ընտանեկան փոխհարաբերությունների խաթարումների հիմնական պատճառները: Այդ պատճառներից կարող են լինել ընտանիքի հիմնական արժեքների մասին ամուսինների պատկերացումների տարակարծությունները, շփման խախտումը, անզիջողականությունը, կասկածամտությունը, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը, սեռական խնդիրները և այլն:

Շատ հաճախ գժտություններ են ծագում կապված պարտականություններ բաժանման, ֆինանսական հարցերի հետ: Պարզվել են, որ տղամարդկանց համար առավել կարևոր են ընտանիքի նյութական-կենցաղային պայմանները, իսկ կանանց համար՝ ամուսինների՝ իրենց նկատմամբ ունենցած հարաբերությունների բնույթը:

Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Վերջինս պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծով:

Իհարկե, կան նաև որոշակի թեմաներ, որոնց հանգիստ քննարկումը կարող է դժվարություն հարուցել ոչ թե անպայման ամուսինների նորմալ հաղորդակցման խախտման, այլ ավանդույթների՝ կուլտուրական, ազգային, ազդեցության հետևանքով:

Կոնֆլիկտներ կարող են առաջանալ նաև ծնող-երեխա հարաբերություններում: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դասիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող համարելը:

Գլուխ 2

2.1 Կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների վրա

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա:

Անհաջող ընտանեկան կյանքի չստեղծված հարաբերությունների դրամայի վախճանը բերում է ամուսնալուծության, որը հիմնավորապես փոխում է ամուսիններից յուրաքանչյուրի ամբողջ հետագա կյանքը: Եվ եթե ամուսնալուծությունը նախկին ամուսինների համար դրամա է, ապա երեխաների համար այն կրկնակի ողբերգություն է: Նրանցից շատերը ծնողների ամուսնալուծությունից հետո ապրում են ոչ լրիվ ընտանիքներում, որտեղ նրանց կյանքն ընթանում է մեծ դժվարություններով:

Եվ քանի որ երեխաների սոցիալականացման գործընթացն առաջին հերթին ընթանում է ընտանիքում՝ սոցիալական դերերի, արժեքների յուրացման և սեռական վերաբերմունքը մշակելու միջոցով, հետևաբար, դպրոցական կյանքում ծագող խնդիրների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերած սոցիալական դիրքորոշումները: Ընտանիքի կառուցվածքը, քանակական կազմը, խնողական դաստիարակության ոճը, ներընտանեկան հարաբերությունները երեխայի մոտ ձևավորում են ածխարհի հանդեպ վստահության կամ անվստահության առաջնային հիմնային մակարդակ և վճռորոշ ազդեցություն ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա: Ընտանիքում ձևավորվում են երեխաների բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումը, երեխան յուրացնում է վարքի կանոններ, տեղի է ունենում անձի սոցիալականացում:


Հետևաբար ընտանիքում տեղի ունեցող ցանկացած իրադրություն մեծապես նպաստում է երեխաների զարգացման և աշխարհայացքի ձևավորման վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտանեկան փոփոխությունները (ամուսնալուծություններ, կորուստներ, ընթացիկ տարածայնություններ) էապես փոխում են երեխաների վարքը, երբեմն դարձնում ագրեսիվ, երբեմն՝ ինքնամոռի կամ գուցե ինքնուրույն: Առհասարակ, ընտանեկան անտարբերությունը ծնում է նոր կոնֆլիկտ, որը ստանում է շարունակական բնույթ: Դա երեխաների մոտ հետզհետե առաջացնում է զայրույթ, անհանգստություն, տխրություն, առողջական խնդիրներ, որոնց մասին նրանք դադարում են բարձրաձայնել, կարծելով, որ ընտանիքում այդ պահին ավելի կարևոր հիմնահարցեր կան, քան իրենք են: Նաև կորում է ինքնավստահության և անվտանգության զգացումը, որի երաշխավորները հենց ընտանիքի մեծահասակներն են:

Այդ դեպքերում հատկանշական է նաև քնի խանգարումն ու դպրոցում կենտրոնանալու դժվարությունը: Մանկավարժները նկատում են, որ սա աստիճանաբար փոխարկվում է միջավայրի երևույթների նկատմամբ անտարբերության, ապա անվստահության առաջացման, գիտության, արվեստի, սպորտի նկատմամբ հետաքրքրասիրության կտրուկ նվազման և հետագայում կարող է արտահայտվել ագրեսիայի, նախանձի ու թշնամանքի(քանզի նա հետ է մտնում մյուսներից), հակահասարակական պահվածքի, հանցագործության և վանդալիզմի դրսևորումներով: Այս ամենից բացի, կոնֆլիկտային ընտանիքների երեխաները մեծ հաշվով խնդիրներ են ունենում միջանձնային հարաբերություններում, դժվարանում են լուծումներ գտնել և շատ անգամ էլ դրանք փնտրում վատ միջավայրում: Այս ամենը բացասաբար են անդրադառնում պատանեկության և հասունության անցման տարիքում, նրանց ռոմանտիկ հարաբերությունների վրա, քանզի ընտանեկան բախումներն իրենց պատճառահետևանքային կապերով նպաստում են այն բանին, որ երեխան ավելի բացասաբար ընկալի սոցիալական միջավայրը, ունենա վատ տպավորություններ և պատեկարացումներ ընտանեկան հարաբերությունների և արժեքների մասին:

Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է բջջային՝ ամուսիններից ու երեխաներից կազմված ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, դաստիարակության մեթոդները: Կարևորելով ընտանիքի և ընտանեկան հարաբերությունների դերը երեխայի անձի ներդաշնակձևավորման վրա, հարցաթերթային հարցման միջցով, որին մասնակցել է ընդլայնված և բջջային 25 ամուսնական զույգ, բացահայտվել է կոնֆլիկտների առաջացման հաճախականությունը:

Հարցաթերթային հարցման արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.



Փաստորեն ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտներն ավելի հաճախ են ծագում, քան բջջային ընտանիքներում:

2.2 Կոնֆլիկտների հետևանքները

Գոյություն ունեն այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականի բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն:

Դրանք են՝

- ներոտիկ ընտանիքներ, որտեղ զույգի մոտ նկատվում են տաճնապայնության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն
- ճգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թժշնաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյան հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման
- պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքներում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում

Այսպիսի ընտանիքներում տեղի ունեցող մշտական վեճերը, կոնֆլիկտները միանշանակ ազդում են ինչպես ամուսնական զույգի, այնպես էլ երեխայի հոգեկան առողջության վրա

Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխայի մեջ կարող է առաջանալ վախի զգացում: Սա նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ երեխան ականատես է լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարաններին : Այդպիսի երեխաներն ապրում են վախի զգացումով, լինում են մեկուսացված և անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգետոմատիկ և այլ հիվանդություններ:

Հարկ է նշել, որ որոշ երեխաների համար կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևույթ:

Հետագայում՝ հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են շրջապատի նկատմամբ, դառնում են սառնասիրտ:

Վերջապես, ցանկացած կոնֆլիկտ երեխան կարող է ընկալել որպես սիրո բացակայություն, անգամ օբյեկտիվ քննադատությունը կամ սխալ վարքագծի մատնանշումը՝ ողջված իր հասցեին: Հետևաբար ծնողների վեճերը սիրո բացակայության, հուսահատության, անպաշտպանության, տաճնապի զգացումի հիմք կարող են հանդիսանալ:

Ընտանեկան կայուն համակարգի բաժանումն ու խաթարումները առաջացնում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են .

- ծնողական խնամքի բացակայություն
- անբավարար ծնողական հոգեկան առողջություն
- միջանձնային տարածայնություններ, որոնցից կարող են ծագել նորերը
- ցածր վարկանիշային ընտանեկան մթնոլորտ, ծնող-երեխա հարաբերությունների անկում
- կրթության անցում հետին պլանհանուն նյութա-ֆինանսական միջոցների հայթայթման:

Գլուխ 3

Ընտանիքի ճիշտ դիրքորոշումը կոնֆլիկտները ճիշտ լուծելու հարցում

Իհարկե հարաբերություններն առանց կոնֆլիկտների հնարավոր չեն: Խնդիրը առանց կոնֆլիկտների լուծման տարբերակների, հուզականության դրսևորումների չափի մեջ է: Մարդիկ տարբեր են, խառնվածքներն ու արձագանքները՝ նույնպես: Կոնֆլիկտային իրադրության մեջ կարևոր է յուրաքանչյուրի դերը: Երեխաները նույնպես իրավունք ունեն արտահայտել իրենց կարծիքը և որոշակի դեր խաղալ խնդրի լուծման գործում: Պատահում է նաև, որ երեխաների կարծիքը անտեսվում է, ընտանիքի անդամները գտնվում են սուր կոնֆլիկտային իրադրության մեջ և երեխային, սթրեսից խուսափելու համար, մտում է պարզապես հեռու կանգնել դրությունից:

Իհարկե, այս դեպքում էլ անտարբերություն է առաջանում: Ելքը մեծահասակների գիտակցական մոտեցումն է:

Կոնֆլիկտային իրավիճակներ կարող են շատ ընտանիքներում առաջանալ:

Սակայն կոնֆլիկտների լուծման բարոյագիտությանը, ցավոք, ոչ բոլորն են տիրապետում: Իհարկե անբարեհաջող ընտանեկան հարաբերությունների պատճառները կարող են տարբեր լինել, բայց շատ կոնֆլիկտներից կարելի խուսափել, եթե ամուսինները ձգտում են պահպանել ու ամրապնդել ընտանիքը՝ ներողամիտ լինել միմյանց թերությունների նկատմամբ, խիստ վիրավորական խոսքեր չասել, վերլուծել ոչ միայն ուրիշների, այլևս սեփական թերությունները: Վստահորեն կարող ենք ասել, որ չի կարելի երջանիկ համարել այն տունը, ու ծնողների ու զավակների միջև բացակայում են լավ հարաբերությունները, որոնք ձևավորվում են ընտանիքի գաղափարական, բարոյական և հոգևոր արժեքների հիման վրա, որոնց մեջ իրենց դերն ունեն նաև ավանդույթները:

Երեխաների մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Այս ճգնաժամային տարիքում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, որոնց բացակայությունը հանգեցնում է նյարդայնության, ընկճախտի, բռնության դրսևորումների: Նաև ոչ տեղին պատիժը, չափից ավել խստությունը, կոպտությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների՝

- առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ
- երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդույթավորված

Կոնֆլիկտների հաղթահարման համար հարկավոր է իմանալ,

- գատել խնդիրը մարդուց
- հիշել, որ գաղափարը կայանում է ոչ թե փաստարկը շահելու, այլ

հակամարտությունն ի վերջո լուծելու մեջ

- հիշել, որ մյուս կողմում անձ է, ով պարտավոր չէ համաձայնել դիմացինի ամեն բանի հետ
- պետք է խոսել ցածրաձայն և ողջամիտ

Անկախ ստեղծված իրավիճակից, երբեք չպետք է դադարեցնել երեխայի կրթության խիստ վերահսկողությունը պետք է ապահովել նրա առողջ ժամանցը, շփումն ընկերների հետ, կազմակերպել բազմաժանր ֆիլմերի դիտումներ, բազմաժանր երաժշտության ունկընդրումներ, ձեռքի աշխատանքի պատրաստում, որոնք խթանում են երեխայի ստեղծագործականությանը, առողջ դատողության զարգացմանը, բարձրացնում արժեհամակարգը: Պետք է երեխաներին հմտորեն ներգրավել խնդրի դրական հանգուցալուծման մեջ և ապահովել ընտանիքի ու երեխայի կայուն զարգացումը:

Եզրակացություն

Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը սովորաբար նվազում է միայն 2-3 տարվա ընթացքում, սակայն կարող են մնալ նաև անդառնալի հետևանքներ: Այդ պատճառով շատ կարևոր է, որ ներընտանեկան խնդիրները հաղթահարվեն համատեղ ջանքերով, հանգիստ և ոչ բռնի պայմաններում, որտեղ կողմերը պատրաստակամորեն լսում են միմյանց, հայտնում իրենց դիրքորոշումները, որոնք էլ բերում են խնդրի խաղաղ կարգավորման: Յուրաքանչյուր ընտանիք պետք է գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Ուստի երեխաների հարցում առավել զգուշավոր պետք է լինել, որոնց հոգևոր և ֆիզիկական ճիշտ զարգացումն ու կայունությունը պետք է գերակա նպատակ լինի ընտանիքի բոլոր անդամների համար և ուղենիշ՝ հատկապես ծնողների հարաբերությունները կարգավորելու գործընթացում:

Չետևաբար անհրաժեշտ է.

- ընտանիքում ստեղծել խաղաղ, մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեբանական զարգացման համար
- հնարավորին չափ խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, հատկապես երեխաների առկայության պարագայում
- անխուսափելի կոնֆլիկտների դեպքում առավել ուշադիր լինել երեխաների հուզական ներաշխարհի կայունության պահպանման և ֆիզիկական խնդիրներին
- միշտ պետք է հավատարիմ մնալ բարեկամական տոնայնությանը
- անմիջապես արձագանքել երեխաների մոտ թեկուզ չնչին բացասական դրսևորումներին
- մշակել ներընտանեկան խնդիրները հմտորեն շրջանցելու տարբերակներ
- միշտ երեխաներին զբաղեցնել հետաքրքիր ժամանցով և երբեք չաղավաղել նրա մանկական հիշողությունը

Գրականության ցանկ

1. Խ. Վ. Գրեբնիկով, Ի. Վ. Դուբրովինա, Գ. Պ. Ռազումիսինա – Ընտանեկան կյանքի բարոյագիտություն և հոգեբանություն
2. Տ. Ենգիբարյան – Ընտանեկան կոնֆլիկտները, դրանց ազդեցությունը երեխաների վրա և հնարավոր լուծումները
3. Ա. Գ. Խարչև, Մ. Ս. Մացկովսկի – Ժամանակակից ընտանիքը և նրա պրոբլեմները, Ե. 1982
4. Վ. Ա. Սուխոմլինսկի – Զաղաքացու ծնունդը, Ե. 1981
5. И. А. Печерникова - Величие души М. 1973